# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Քաջարան 29 նոյեմբերի 2019թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2019 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N364-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2019 թվականի մայիսի 14-ի N51-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2019 թվականի նոյեմբերի 18-29-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) հետևյալ 17 բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնության և շրջակա միջավայրի պահպանություն, ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում:

1. Հիմք ընդունելով վերոնշյալ 17 բնագավառների մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության՝ 2019 թվականի նոյեմբերի 18-28-ն ընկած ժամանակահատվածում կազմված N1/1 և N1/2, N2, N3, N4, N5. N6, N7, N8, N9, N10, N11, N12, N13, N14, N15, N16 N17 արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:

2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Քաջարան համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Քաջարան համայնքի ղեկավարին:

Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝

Ս. Ավետիսյան

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավար՝

Մ. Փարամազյան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2019 թվականի նոյեմբերի 29-ի արձանագրության

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության 17 բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության N1/1, N1/2, N2-N17 արձանագրությունները:
(Հսկողության ժամանակահատվածը՝ 2017 թվականի նոյեմբերի 5-ից՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրից մինչև 2019 թվականի նոյեմբերի 29-ը: Այն բնագավառները, որոնցում խախտումներ չեն արձանագրված, ներքոհիշյալ աղյուսակում չեն նշվում:)

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում | | | |
| 1.27. Համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում ՏԻՄ օրենքի պահանջների պահպանման առկայություն: | Թերի է պահպանված | Ստուգվող ժամանակահատվածում պահպանվել են համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորմանը ներկայացվող պահանջները, բացառությամբ այն բանի, որ նախագծերի քննարկման մասին ավագանու մշտական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ չկան: | X |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.30. Համայնքի ավագանու անդամի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը և դրա նիստերին մասնակցությունը: | Թերի է պահպանված | Համայնքի ավագանին իր 2017-11-17 N7-Ա որոշմամբ ստեղծել է 3 մշտական հանձնաժողովներ՝ 1-ին՝ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի, 2-րդ՝ ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի, 3-րդ՝ սոցիալական, առողջապահության և բնության պահպանության մշտական հանձնաժողովներ՝ «ավագանու մեկ անդամը՝ մեկ մշտական հանձնաժողովի կազմում» սկզբունքով, սակայն հանձնաժողովների նիստերի անցկացման մասին արձանագրություններ չկան: | Առաջարկվում է սույն իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները, ինչպես նաև սույն դրույթը քննարկել համայնքի ավագանու առաջիկա նիստում, այսուհետ սահմանված կարգով գումարել նաև հանձնաժողովների նիստեր և կազմել համապատասխան արձանագրություններ: |
| 2.24. Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարած համապատասխան փոփոխությունների առկայություն: (2.11) | Թերի է պահպանված | Համայնքի գույքի ցանկը համայնքի ստեղծումից հետո առաջին անգամ հաստատվել է 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N29-Ա որոշմամբ, 2018 թվականի համար՝ 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N72-Ա որոշմամբ, սակայն ստուգվող ժամանակահատվածում գույքի ցանկի փոփոխությունները համայնքի ավագանու հաստատմանը ընթացքում չեն ներկայացված, այլ արտացոլված են միայն տարեվերջյան գույքագրման որոշումներում: | Առաջարկվում է այսուհետ բացառել նման թերությունը և ապահովել օրենսդրության պահանջները: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ոսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 3.04. Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի նախագծի կազմման, համայնքի ավագանու հաստատման, բյուջեի կատարման, դրանում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև համայնքի ավագանուն եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն: | ։րի է պահպանվ | Համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման եռամսյա հաղորդումները ընդունվել են ի գիտություն համայնքի ավագանու 12.04.2018թ-ի, 08.08.2018թ-ի և 26.10.2018թ-ի ավագանու նիստերի ընթացքում, իսկ 2019 թվականի բյուջեի կատարման եռամսյա հաղորդումները՝ 05.05.2019թ-ի, 30.07.2019թ-ի և 28.10.2018թ-ի ավագանու նիստերի ընթացքում՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթի խախտմամբ, որի համաձայն, հաղորդումները պետք է ներկայացվեն մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:: | Առաջարկվում է այսուհետ պահպանել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետը |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 3.08. Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: | րի է պահպանվ | Համայնքի աշխատակազմի կողմից 2018 և 2019 թվականներին օգտագործված բենզինի ծախսերի մի մասի հիմնավորումը պետք է իրականացնել հաշվի առնելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը (1. հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը), ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ. N37 հրամանի հավելվածով սահմանված (կետ 48) մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկներով (ձև Ծխ-6): | Առաջարկվում է այսուհետ բացառել բացթողումները և ապահովել բոլոր ծախսերի հիմնավորվածությունը՝ սահմանված կարգով: |
| Քաղաքաշինություն | | | |
| 1.01. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | Չի պահպանված | Համայնքը դեռևս չունի գլխավոր հատակագիծ: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Քաջարանին: | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.02. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի առկայություն | Չի պահպանված | Համայնքը չունի գոտևորման նախագիծ: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Քաջարանին: | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին |
| 1.03. Գլխավոր հատակագիծը մշակվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված և հաստատված նախագծային առաջադրանքի հիման վրա | Չի պահպանված | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որի մեջ է նաև Քաջարանը: | Ապահովել համայնքում առկա ելակետային տվյալների և նյութերի տրամադրումը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին |
| 6.01. Համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծերը համապատասխանում են ՃՀԱ-ում նշված դրույթներին և ՀՀ օրենսդրությամբ ճարտշին. նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին | Թերի է պահպանված | Մշակված և համաձայնեցված նախագծերում հիմնականում բացակայում են շինարարության տևողության նորմատիվային գրաֆիկները, խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 111-112-րդ կետի պահանջները | Առաջարկվում է ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 111-112-րդ կետի պահանջների կատարումը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 6.04. Պահպանվում են շինարարության թույլտվության տրամադրման ժամկետները /10 օր, 15 օր/, ըստ նախատեսվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի | Թերի է պահպանված | 1) Շին. թույլտվություն ,N 1 17,11,2017թ,շին. թույլտվություն N 16 03,11,2018թ մասով չի նշվել օբյեկտի ռիսկայնության աստիճանը, կատեգորիան: Խախտվել են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 596-Ն որոշման հավելված 5-ի ձև N 2-3 ձևաթղթի պահանջները<br>2) 8 շին թույլտվության մասով չի նշվել համայնքի հետ նախագծի համաձայնեցման թվագրումը: Խախտվել են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև N 2-3 ձևաթղթի պահանջները: | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 5-ի ձև N 2-3 ձևաթղթի պահանջները |
| 6.08. ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն | Թերի է պահպանված | Շին. թույլ N 1 17,11,2017թ., շին. թույլ N 2 18,04,2018թ., շին. թույլ N 4,21,06,2018թ., շին. թույլ N 10 09,10,2018թ., շին. թույլ N 21 24,12,2018թ. և քանդ.թույլ. N 1 27.02.2018թ. մասով: Խախտվել են ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները: | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122-րդ կետի պահանջները |
| 6.09. 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ իրազեկվում է ՀՀ համապատասխան մարզպետը | Թերի է պահպանված | շին. թույլ N 1 17,11,2017թ շին. թույլ N 2 18,04,2018թ շին. թույլ N 4,21,06,2018թ շին. թույլ N 10 09,10,2018թ շին. թույլ N 21 24,12,2018թ և քանդ.թույլ. N 1 27.02.2018թ մասով խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները |
| 7.17. Շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է համապատասխան մարզպետը (կցվում է շահագործման ակտի պատճենը) | Թերի է պահպանված | Ավ. ակտ (շ.թ) N1 25.12.2018թ, ավ. ակտ (շ.թ) N3 22.03.2018թ, մասով խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջը: | Ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջի կատարումը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 7.18. շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է տեսչության տարածքային բաժինը (կցվում է շահագործման ակտի պատճենը) | Թերի է պահպանված | Ավ. ակտ (շ.թ) N1 25.12.2018թ, ավ. ակտ (շ.թ) N3 22.03.2018թ, մասով խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջը: | Ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 169-րդ կետի պահանջի կատարումը: |
| 10.01. Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշում, հավելված N 1, կետ 9) | Չի պահպանված | Մատյաններ չեն կազմվել: | Անհրաժեշտ է յուրաքանչյուր գերեզմանատան համար ապահովել մատյանի վարումը: |
| 10.03. ՀՀ-ում հուղարկավորելու մասին անվճար տեղեկանքի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշում հավելված N 1, կետ 22) | Չի պահպանված | Մատյաններ չեն կազմվել: | Այսուհետ ապահովել մատյանների կազմումը և այդ հիման վրա տեղեկանքի տրամադրումը: |
| 10.05. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակում և հաստատում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 10) | Չի պահպանված | Չեն սահմանված | Ապահովել համապատասխան փաստաթղթերի կազմումը: |
| 10.06. Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 11, 12) | Չի պահպանված | Առկա են սահմանված չափերի խախտումներ: | Այսուհետ ապահովել սահմանված չափերի պահպանումը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 10.07. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | Թերի է պահպանված | Ապահովված է գերեզմանատների մաքրությունը, բացակայում են հատակագծերը: | Միջոցներ ձեռնարկել համապատասխան հատակագծերը ձեռք բերելու ուղղությամբ: |
| 10.09. Վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքների սահմանումը՝ ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N 7, կետ 8) | Չի պահպանված | Չեն սահմանված | Անհրաժեշտ է ավագանու որոշմամբ սահմանել: |
| Արտակարգ իրավիճակներ | | | |
| 1.01. Բնակչության տարահանման պլանավորում և կազմակերպում.<br>Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված համայնքային տարահանման հանձնաժողովի, տարահանման հանձնաժողովի հաստատված կանոնադրության, տարահանման հանձնաժողովի կողմից մշակված տարահանման պլանի առկայություն: | Թերի է պահպանված | Համայնքի ղեկավարի 26.08.2013թ թիվ 171-Ա որոշում, Տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին, 19.02.2018թ թիվ 104-Ա որոշում տարահանման պլանը հաստատելու մասին: | Վերախմբագրել տարահանման հանձնաժողովի կազմը, տարահանման պլանը ճշգրտել: |
| 1.02. Տարահանված բնակչության կենսաապահովում.<br>Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանի առկայություն: | Չի պահպանված | Պլանը բացակայում է | Մշակել, համաձայնեցնել և հաստատել պլանը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.03. Բնակչության պատսպարման իրականացում. Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարման համար նախապես մշակված և հաստատված ամրագրման պլանի, պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությանը պատսպարելու նպատակով՝ պարզագույն թաքստոցների կառուցման համար համայնքի ղեկավարի կողմից հաստատված պլանի առկայություն: | Թերի է պահպանված | Ներառված է մասնակի՝ համայնքի ՔՊ պլանում: Բնակչության պատսպարման հաշվարկները ներառված են համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանում: | Պաշտպանական կառույցների մուտքի վրա կախել ցուցատախտակներ, իսկ դեպի պաշտպանական կառույցներ տանող շարժական երթուղիների վրա՝ ցուցանշաններ: Պլանավորել պաշտպանական կառույցներին չամրագրված բնակչության համար արագ խառուցման ... |
| 1.04. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն: | Չի պահպանված | Պլանը բացակայում է | Մշակել, համաձայնեցնել և հաստատել պլանը |
| 1.05. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն: | Չի պահպանված | Պլանը բացակայում է և, հետևաբար, հայտեր չեն ներկայացված: | Հաշվարկել տուժած բնակչության համակողմանի ապահովման անհրաժեշտ միջոցները և ներկայացնել համապատասխան հայտերը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 3.01. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունների առկայություն. 1) կապի և ազդարարման, 2) ինժեներական, 3) բժշկական, 4) տրանսպորտային, 5) առևտրի և սննդի, 6) էներգետիկայի և լուսաքողարկման, 7) բույսերի և կենդանիների պաշտպանության, 8) հասարակական կարգի պահպանման, 9) նյութատեխնիկական մատակարարման, 10) կոմունալ-տեխնիկական՝ բնակչության հատուկ սպասարկումների: Քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայությունների հաստատված կանոնադրությունների առկայություն: | Թերի է պահպանված | Առկա է Համայնքի ղեկավարի 12.11.2014թ որոշումը, որն ընդունվել է մինչև խոշորացումը, սակայն անհրաժեշտ է ունենալ նշված ծառայությունները՝ արդեն խոշորացված համայնքի համար: | Առաջարկվում է ընդունել համայնքի ղեկավարի համապատասխան որոշում, որը կվերաբերի ողջ խոշորացված համայնքին: |
| 3.02. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված քաղաքացիական պաշտպանության համայնքային կազմավորումների առկայություն (անհրաժեշտության դեպքում): | Թերի է պահպանված | Համայնքի կազմավորումների վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանում, սակայն չկա համայնքի ղեկավարի համապատասխան որոշում: | Առաջարկվում է ընդունել համայնքի ղեկավարի համապատասխան որոշում |
| 4.01. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն: | Թերի է պահպանված | 10.07.2019թ թիվ 460 գրությամբ հայտ է ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՍՊՏԾ ՊՈԱԿ-ին՝ Քաջարան քաղաքի Լեռնագործների 17,19 բազմաբնակարան շենքերի վերաբերյալ տալ տեխնիկական եզրակացություն: Սակայն չկան սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտեր: | Առաջարկվում է ներկայացնել սահմանված հայտերը: |
| Բնության և շրջակա միջավայրի պահպանություն | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| *7.01.* Համայնքի վարչական սահմաններում տարածքների սանիտարական մաքրման սխեմաների առկայություն | Չի պահպանված | Սխեմաները կազմված չեն: Խախտվել է «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, համաձայն որի՝ թափոնների գործածության ոլորտում համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում կազմում է տարածքների սանիտարական մաքրման սխեմաները: | Առաջարկվում է մշակել, կազմել և հաստատել սխեմաները: |

Վերոնշյալ բոլոր դրույթների մասով հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով առաջարկվում է 20 աշխատանքային օրվա ընթացքում սկսել միջոցներ ձեռնարկել այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

Սույն հավելվածը կազմված է 2 օրինակից:

ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝

Ս.Ավետիսյան

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավար՝

Մ.Փարամազյան